ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզի Գետազատ գյուղական համայնքի ղեկավարի 2011թ –ի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների

15.07.2011թ -ին Գետազատ գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում, որը նախագահում էր՝ Ճ. Վարդանյանը , քարտուղարում էր՝ աշխատակազմի քարտուղար՝ Ս. Հովսեփյանը:

Մասնակցում էին ավագանու անդամները, համայնքի ղեկավարի

աշխատակազմը, համայնքի բնակիչներ:

ԼՍԵՑԻՆ՝ Արարատի մարզի Գետազատ համայնքի ղեկավար Ճ. Վարդանյանի հաշվետվությունը՝ 2011թ առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ, ՈՐ

2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Գետազատ համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետարանը բնակիչներին տվել է 141 տեղեկանք, ստացել 36 պաշտոնական նամակ մարզպետարանից և այլ կազմակերպություններից 42 նամակ որոնք քննարկվել են և տրվել են պատասխաններ:

2011թ –ի առաջին կիսամյակի ընթացքում համայնքում պարբերաբար կատարվել է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և համայնքի բնակիչներին է բաժանվել մկան դեղ:

2011թ –ի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա/ հողի հարկ - 686.9 հազար դրամ

բ/ գույքահարկ - 365.6 հազար դրամ

գ/ տեղական տուրք - 78.0 հազար դրամ

դ/ վարձավճար - 112.6 հազար դրամ

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 999.0 հազար դրամի ֆինանսական աջակցություն

Created with nitroPDF professional
download the free trial online at nitropdf.com/professional

Համայնքում տրվել է 580.0 հազար դրամի թաղման նպաստ

Ազատ ոճի ըմբշամարտի մրցումների մասնակցին տրամադրվել է 60.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն

Հայրենական մեծ պատերազմի , Արցախյան պատերազմի և Աղվանստանում ծառայած և հաշմանդամ դարձած ազատամարտիկներին ֆինանսական աջակցություն է տրամադրվել 100.0 հազար դրամ

Աղբահանության աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 430.0 հազար դրամ

Գետազատի գյուղապետ՝ Ճ. Վարդանյան

Created with nitroPDF professional
download the free trial online at nitropdf.com/professional